[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
11	Հոկտեմբեր	2019 թ.		Բ	7544078707
[4] Մատուցման ամսաթիվը					
11	Հոկտեմբեր	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 6 7 8 1
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ N 2470103343210000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Ջեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 23100817 քրեական գործով դատահաշվապահական փորձաքննություն	հատ	1	540000		540000
Ընդամենը						540000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

11/10/2019 16:08:17

Ո Ր Ո Շ Ում

Դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին

« 18 » դեկտեմբերի 2017 թ. քաղ. Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության մայոր՝ Ա. Ս. Իգիթյանս, քննարկելով վարույթիս թիվ 23100817 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2010 թվականի հոկտեմբերի 10-ին «Նայթեքս» ԲԲ ընկերությունը «ՓՄՁ ՈւՎԿ Ներդրումներ» ՓԲ ընկերությունից 36 ամիս մարման ժամկետով, տարեկան 11 տոկոս տոկոսադրույքով ստացել է 250 մլն. ՀՀ դրամ գումարի վարկավորում՝ ընկերությանը պատկանող Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Գագարինի 1 հասցեում գտնվող բամբակամանվածքային ֆաբրիկայի համար հումք ձեռք բերելու և ընթացիկ աշխատանքային հարցերը կազմակերպելու նպատակով, որի դիմաց գրավադրել է հիշյալ հասցեում գործող ֆաբրիկայի անշարժ գույքը: Բացի այդ ընկերությունը 2010 թվականին 120.000 ԱՄՆ դոլարի գումարի չափով արտոնյալ պայմաններում վարկ է ստացել նաև «Մալաթիա ՈւՎԿ» ՍՊԸ-ից, որը նույնպես օգտագործվել է հումք ձեռք բերելու նպատակով, իսկ վարկի դիմաց՝գրավադրվել է հիշյալ բամբակամանվածքային ֆաբրիկայի մեքենաների սարքավորումները: 2013 թվականի ընթացքում ընկերությունը մատակարարման պայմանագիր է կնքել «ԳԱԲ էլեկտրոմաշ» ՍՊԸ-ն բամբակե մանվածք և մանրաթել է մատակարարել «Նայթեքս» ԲԲԸ-ին:

2013 թվականի հունիս ամսից սկսած, ստեղծված ֆինանսական դրությունից, «Նայթեքս» ԲԲ ընկերությունը վարկային կազմակերպությունների, ինչպես նաև «ԳԱԲ էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի նկատմամբ գույքային պարտավորությունները չի կատարել, որով «ԳԱԲ էլեկտրոմաշ» ՍՊԸ խախտել է հարկային պարտավորությունները և վերջինս ևս հայտնվել է անելանելի ֆինանսական դրության մեջ: «Նայթեքս» ԲԲԸ-ն ունի 128 մլն ՀՀ դրամի և 120.000 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկային պարտավորություններ: «ԳԱԲ էլեկտրոմաշ» ՍՊԸ-ն, ելնելով իրավիճակից, դիմել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ «Նայթեքս» ԲԲԸ-ն սնանկ ճանաչելու պահանջով և 21.06.2016 թվականին «Նայթեքս» ԲԲԸ-ն ճանաչվել է սնանկ: 2016 թվականի ընթացքում «Անկախ գնահատողների կազմակերպության» կողմից կատարվել է նշված բամբակամանվածքային ֆաբրիկայի անշարժ գույքի գնահատում, որը գնահատվել է 544 300 000 ՀՀ դրամ: Սակայն «ՓՄՁ·ՈւՎԿ Ներդրումներ» ՓԲ ընկերության կողմից հիշյալ գույքն օտարվել է մեկ աճուրդի ընթացքում, հոլանդական բաց դասական եղանակով 166.000.000 ՀՀ դրամով:

Դեպքի առթիվ 2017 թվականի հունիսի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 23100817 քրեական գործը:

Քրեական գործով «Նայթեքս» ԲԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Վլադիմիրի Ախոյանից առգրավվել են «Նայթեքս» ԲԲ ընկերության 2011, 2012, 2015 թվականների հաշվապահական փաստաթղթերը:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառի հատուկ մասնագիտական

գիտելիքներ, ուստի հիմք ընդունելով շարադրվածը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ, 245-րդ և 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 23100817 քրեական գործով նշանակել դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Հույս և օրենք» ՍՊԸ-ի մասնագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1. ա/ 2011 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ «Նայթեքս» ԲԲ ընկերությունը գործունեություն ծավալել է Հայաստանի Հանրապետությունում ոլորտը կարգավորող, գործող օրենսդրության համաձայն, թե ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ խախտումներ են թույլ տրվել, ե՞րբ և ու՞մ կողմից,

2. բ/ 2011 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ «Նայթեքս» ԲԲ ընկերությունը ֆինանսական խախտումներ թույլ տրվել է թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ խախտումներ են թույլ տրվել, ե՞րբ, ու՞մ կողմից, ի՞նչ չափով, դրանց արդյունքում պետությանը կամ կազմակերպությանը վնաս պատճառվե՞լ է, թե ոչ,

3. գ/ 2011 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ «Նայթեքս» ԲԲ ընկերության տարիֆիկացիոն ցուցակները ճիշտ են կազմվել, թե ոչ, ֆինանսական խախտումներ առկա են, թե ոչ, եթե այո, ապա արդյունքում պետությանը կամ կազմակերպությանը վնաս պատճառվել է, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ չափով և ու՞մ կողմից,

4. դ/ ըստ ներկայացված հաշվետվությունների կազմակերպությունը 2011 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ աշխատավարձերի կամ այլ գծով պարտքեր ունեցել է, թե ոչ, եթե այո, ապա որքա՞ն և արդյո՞ք այդ պարտքերն արտացոլվել են ներկայացված հաշվետվություններում:

5. ե/ որքա՞ն է կազմել 2011 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ կազմակերպության եկամուտները, դրանք ինչպես են բաշխվել, դրամարկղը և բանկային հաշիվներն ինչպե՞ս են տնօրինվել, արդյո՞ք հաշվապահական ձևակերպում ստացել են, թե ոչ և այդ ընթացքում ի՞նչ խախտումներ են թույլ տրվել:

6. զ/ 2011 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ կազմակերպության կողմից ներդրումներ, դրանց վերադարձ, չհիմնավորված ծախսեր, փոխառություններ, գույքի գրավադրումներ կատարվե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա որքա՞ն և ի՞նչ նպատակով, այդ ընթացքում ի՞նչ խախտումներ են թույլ տրվել:

7. է/ «Նայթեքս» ԲԲ ընկերությանը կեղծ կամ կանխամտածված սնանկության տարե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա ե՞րբ, ու՞մ կողմից, ի՞նչ գործողությունների արդյունքում:

8. զ/ «ՓՄՁ ՈՒՎԿ Ներդրումներ» ՓԲ ընկերության կողմից աճուրդ վաճառքը օրենքի շրջանակներում է կազմակերպված, թե ոչ:

3. Փորձաքննության ընթացքում եթե կառաջանան այլ հարցեր, որոնք որոշման մեջ ներառված չեն եղել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետի իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

4. Հետազոտման նպատակով փորձագետին տրամադրել 2011, 2012, 2015 թվականների «Նայթեքս» ԲԲ ընկերությանը հաշվապահական փաստաթղթերը, քրեական գործի նյութերը սքանավորված տարբերակով, իսկ անհրաժեշտ այլ փաստաթղթերը կտրամադրվեն լրացուցիչ:

Ավագ քննիչ՝ Ա. Ս. ԻԳԻԹՅԱՆ